ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄՆ ԱԼԺԻՐ 1830 Թ. ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

XIX դարի սկզբին Ալժիրն ավատատիրական պետություն էր՝ դեյի[1] գլխավորությամբ: Փաստացի գտնվելով Օսմանյան կայսրության կազմի մեջ՝ նա վարում էր ինքնուրույն քաղաքականություն: XVI դարում Ալժիրում հիմնված ենիչերաձովահենային պետությունն արդեն XVII դարում հասավ իր ծաղկման գագաթնակետին: Այդ ժամանակաշրջանում Ալժիրը տնօրինում էր Միջերկրական ծովի ամենահզոր ռազմական նավատորմը: Երկրների մեծ մասն իրենց նավերի անվտանգությունն ապահովելու համար տարեկան հարկ էր վճարում Ալժիրի կառավարչին:

1671 թ. երկիրը սկսեց կառավարել դեյը, որն ընտրվում էր Ալժիրում տեղակայված ենիչերիական զորքերի հրամանատարների՝ աղաների և նավապետների դիվանի կողմից[2]: Դեյը վայելում էր գրեթե լիակատար անկախություն և չէր ենթարկվում կենտրոնական իշխանություններին, սակայն պարբերաբար թանկարժեք նվերներ էր ուղարկում սուլթանին, ինչի շնորհիվ ստանում էր զենք և Թուրքիայում ենիչերիների հավաքագրման իրավունք:

Սկսած XVIII դարի վերջից՝ դեյերի «ծովահենային» պետությունը գտնվում էր խոր ճգնաժամի մեջ: Անգլիայի, Ֆրանսիայի և Հոլանդիայի ռազմածովային նավատորմերի պատժիչ գործողությունների արդյունքում կտրուկ նվազել էին ծովահենության միջոցով ստացվող եկամուտները: Քչացել էր նաև Օսմանյան կայսրությունից եկող օժանդակությունը, գրեթե լիովին դադարել էր նաև զենքի և զինամթերքի ներմուծումը, և, ինչն առավել կարևոր էր, ենիչերիների զորքն այլևս չէր համալրվում նորակոչիկներով: Այս ամենի հետ մեկտեղ երկրի բեյլիքությունների[3] ղեկավարները՝ բեյերը, ժամանակի ընթացքում իրենց

---

[1] Դեյը անվանաձևն առաջացել է թուրքերեն դայի՝ հորեղբայր, քեռի բառից:

[2] Ланда Г. "История Алжира XX век". Москва 1999, стр. 8.

[3] Ալժիրը բաժանված էր վարչական երեք շրջանների (բեյլիք)՝ Ալժիր, Օրան և Կոնստատինա:

ենթակայության տակ գտնվող տարածքներում ձեռք բերելով անսահմանափակ իշխանություն և հեղինակություն, հրաժարվեցին ենթարկվել կենտրոնական իշխանությանը, ինչն էլ հասկանալիորեն հանգեցրեց երկրի մասնատվածությանն ու թուլացմանը: Անհրաժեշտ է նշել նաև, որ դեյի իշխանությունը երբեմն չէր տարածվում և էական ազդեցություն չուներ քոչվոր ցեղերով բնակեցված տարածքներում: 1830 թ. Ալժիրի բնակչության թիվը կազմում էր մոտ երեք միլիոն, որոնցից 30 հազարը թուրքեր էին, իսկ 20 հազարը՝ թուրքերի և տեղացիների խառը ամուսնությունների սերունդ[4]: Նաև այդ հանգամանքով էր պայմանավորված, որ Ալժիրի թուրք-ենիչերիական վերնախավի անմիջական իշխանությունը տարածվում էր միայն ծովափնյա շրջանների վրա, ինչը կազմում էր երկրի տարածքի ընդամենը մեկ վեցերորդ մասը: Ալժիրի մյուս հատվածները, ինչպես Կաբիլիան, Տուգուրտը, Այն-Մադինը, լիովին անկախ էին[5]:

Այսպիսով, XIX դարի սկզբին Ալժիրը վերածվել էր թույլ և մասնատված երկրի, ինչն էլ պատճառ հանդիսացավ, որ այն դառնա Հյուսիսային Աֆրիկայում ֆրանսիական գաղութային նվաճումների առաջին թիրախը:

Ալժիրի զավթման ծրագրերը հասունացել էին շատ ավելի վաղ՝ դեռևս Նապոլեոն I-ի օրոք (1804-1815 թթ.): Ալժիրի գրավումը ոչ միայն նոր տարածքների ձեռքբերման, այլև, ինչն ավելի կարևոր էր, ֆրանսիական արտադրանքի համար նոր շուկաների ստեղծման հնարավորություն կհանդիսանար: Բացի դրանից Ֆրանսիայի թագավոր Կարլոս X-ը (1824-1830 թթ.) հույս ուներ Ալժիրի գրավմամբ ամրապնդել Բուրբոնների արքայատոհմի թուլացած դիրքերը:

Որպես ներխուժման հիմնական պատճառներ Ֆրանսիան առաջ քաշեց ծովահենության խնդիրը և ֆինանսական տարաձայնությունները երկու երկրների միջև: Իհարկե, հասկանալի է, որ այս պատճառ-

---

[4] Аникин В., Вайлов М. "Историческая трансформация стран Магриба (алжирский вариант)", Москва 2016, стр. 56. Ալժիրի բնակչությունը հիմնականում կազմում էին արաբները և բերբերները, ինչպես նաև քրիստոնյաներ, Սահարայի սևամորթներ և հրեաներ: Գյուղացիական բնակչության գրեթե կեսը կազմում էին կաբիլները՝ նստակյաց բերբերները:

[5] Хмелева Н. "Государство Абд аль-Кадира Алжирского", Москва 1973, стр. 11.

ները որևէ էական հիմնավորում չունեին: Անհրաժեշտ է նշել, որ մաղրիբյան ծովահենությունը, ինչպես արդեն նշել ենք, XVIII դարի վերջում արևմտյան նավատորմերի պատժիչ գործողությունների արդյունքում բավականին թուլացել էր և կորցրել իր նախկին հզորությունն ու դադարել էր որևէ էական վտանգ ներկայացնել միջերկրածովյան նավագնացության համար:

Ինչ վերաբերում է ֆինանսական խնդիրներին, ապա դեյը, որին ֆրանսիական կառավարությունը տասնյակ միլիոնների պարտք ուներ, բավարարված չէր այդ պարտքի մարման պայմաններով: Նշված պարտքը կուտակվել էր դեռևս Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքի օրերին, երբ Ալժիրը Նապոլեոնի բանակին և շրջափակման մեջ գտնվող Ֆրանսիային սննդամթերք էր մատակարարում: Դեյը համոզված էր, որ ֆրանսիական պարտքը ամբողջովին մարված չէ, ինչի արդյունքում Ալժիրի գանձարանը մի քանի միլիոն ֆրանկի վնաս էր կրել[6]:

Վերոհիշյալ խնդիրները և տարաձայնություններն ուռճացվում և շահարկվում էին Ալժիրում Ֆրանսիայի հյուպատոս Պիեռ Դևալի կողմից, ինչը հաճախ դառնում էր դեյի և հյուպատոսի միջև վեճերի պատճառ: Եվ այդպիսի բուռն վեճերից մեկի ժամանակ դեյը հովհարով հարվածեց Պ. Դևալին, որն էլ և դարձավ այն պատրվակը, որին երկար սպասում էր ֆրանսիական իշխանությունը:

«Հովհարով հարվածից» անմիջապես հետո՝ 1827 թ., Ֆրանսիան խզեց դիվանագիտական հարաբերությունները Ալժիրի հետ, իսկ ֆրանսիական նավատորմն արգելափակեց երկրի ծովափնյա շրջանները[7]:

Հարկ է նշել նաև, որ Ֆրանսիայի զավթողական ծրագրերը, շնորհիվ եվրոպական երկրներում մինչ այդ իրականացրած մեծածավալ դիվանագիտական աշխատանքի, բացառությամբ Անգլիայի, որևէ ընդդիմություն չառաջացրին: Ինչ վերաբերում է Անգլիային, ապա Ֆրանսիան քաջ գիտակցում էր, որ Լոնդոնն այդ պահին այդ ծրա-

---

[6] Луцкий В. "Новая история арабских стран", Москва, 1965, стр. 14.

[7] Lorcin P., Imperial Identities: Stereotyping, Prejudice and Race in Colonial Algeria, Tauris, 1999. p. 17.

գրերի իրականացումը կանխելու ուղղությամբ որևէ վճռական գործողություն չէր կարող ձեռնարկել: Մեծ նշանակություն ուներ նաև Ավստրիայի և Ռուսաստանի դրական վերաբերմունքը[8], որոնք այդ ժամանակաշրջանում լարված հարաբերություններ ունեին Օսմանյան կայսրության հետ:

Այսպիսով, գրեթե ամեն ինչ պատրաստ էր ներխուժման համար: Սկզբնական շրջանում Ֆրանսիան Ալժիրի գրավումը որոշել էր իրականացնել տարածաշրջանում իր դաշնակից Եգիպտոսի խեդիվ Մուհամմեդ Ալիի օգնությամբ: Սակայն վերջինիս հետ մի շարք քաղաքական խնդիրներ ունենալու, ինչպես նաև պարգևավճարի չափի վերաբերյալ համաձայնության չգալու պատճառով[9] Կառլոս X-ի կառավարությունը որոշեց գործել ինքնուրույն՝ ֆրանսիական զենքի միջոցով:

1830 թ. հունիսի 14-ին ֆրանսիական 37-հազարանոց բանակը գեներալ դե Բուրմոնի հրամանատարությամբ ափ իջավ Ալժիր քաղաքից 23 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սիդի Ֆարուշ ծովածոցում[10]: Ալժիրի դեյ Հուսեյնը գիտակցելով, որ այս անգամ ֆրանսիացիները չեն բավարարվի միայն պատժիչ գործողություններով, սկսեց մոբիլիզացնել իր ենիչերիներին: Դեյին ռազմական օգնություն տրամադրեցին նաև Կոնստանտինայի բեյ Ահմեդը և Թիթերիի բեյ Մուսթաֆան, չնայած նրան, որ վերջիններս ցանկանում էին ազատվել կենտրոնական իշխանության վերահսկումից: Այսպիսով, ալժիրյան բանակի ընդհանուր թիվը հասավ 40 հազարի[11], և այս ուժերով որոշվեց հարձակվել Սիդի Ֆարուշում տեղակայված ֆրանսիական բանակի վրա: Սակայն Իբրահիմ աղայի գլխավորած ալժիրյան բանակի հարձակումը չունեցավ սպասված արդյունքը: Ֆրանսիացիները, սկզբնական անհաջողությունից արագ վերականգնվելով, անցան հակահարձակման և մի շարք հաղթանակներից հետո փախուստի մատնեցին Իբրահիմ աղայի զորքերին: Հետապնդելով վերջինիս զորքերի

---

[8] Ланда Г. "Борьба алжирского народа против европейской колонизации (1830-1918)", Москва 1976, стр. 63.

[9] Хмелева Н., նշվ. աշխ., էջ 18:

[10] Луцкий В., նշվ. աշխ., էջ 14:

[11] Куропаткин А.Н. "Алжирия", Санкт-Петербург, 1877, стр. 16.

մնացած մասին՝ ֆրանսիացիները հունիսի 24-ին ընդհուպ մոտեցան Ալժիր քաղաքին՝ կանգ առնելով նրանից ընդամենը 5 կիլոմետր հեռավորության վրա[12]:

Ալժիրի գրոհը սկսվեց հունիսի 29-ին, և հինգ օր անց՝ հուլիսի 4-ին, երբ գրավվեց «Կայսրի ամրոցը», դեյ Հուսեյնը անձնատուր եղավ հետևյալ պայմաններով.

1. Կազբայի ամրոցը և Ալժիրը պաշտպանող մյուս ամրոցները, ինչպես նաև քաղաքի նավահանգիստը հանձնվում են ֆրանսիացիներին:

2. Ֆրանսիական զորքերի հրամանատարը պարտավորվում է ապահովել դեյի և նրա ունեցվածքի անձեռնմխելիությունը:

3. Դեյն ազատ իրավունք ուներ իր ընտանիքի հետ միասին և իր ունեցվածքով լքելու Ալժիրը:

4. Նույն իրավունքները տրվում էին նաև ենիչերիներին[13]:

Հուլիսի 5-ին քաղաքը հանձնվեց ֆրանսիացիներին: Դեյ Հուսեյնը մեկնեց Նեապոլ, իսկ ենիչերիների զորքի հիմնական մասը դուրս բերվեց Ալժիրից: Քաղաքի հետ միասին ֆրանսիացիները տիրացան մեծաքանակ ավարի, այդ թվում նաև Ալժիրի պետական գանձարանին, որը կազմում էր մոտ 50 միլիոն ֆրանկ[14]:

Քաղաքի նվաճումից հետո Ֆրանսիան դեռևս վերջնականապես չէր որոշել՝ ինչպիսին պետք է լինի Ալժիրի հետագա կարգավիճակը: Ֆրանսիական իշխանությունները տատանվում էին մի քանի հնարավոր տարբերակների վրա՝ Ալժիրի վերածումը ֆրանսիական պրոտեկտորատի, վերականգնել երկրի վրա օսմանյան սուլթանի անմիջական հսկողությունը, վերածել Ալժիրը ֆրանսիական գաղութի կամ բաժանել այն ազդեցության երկու գոտիների՝ թուրքական և ֆրանսիական[15]:

1830 թ. Փարիզում տեղի ունեցած «հուլիսյան» հեղափոխությունը փոխեց ոչ միայն իշխանությունը Ֆրանսիայում, այլ նաև Ֆրանսիայի ալժիրյան ծրագրերը: Կառլոս X Բուրբոնին փոխարինած Լուի

---

[12] Նույն տեղում:

[13] Նույն տեղում, էջ 17:

[14] Аникин В., Вайлов М., նշվ. աշխ., էջ 58:

[15] Ланда Г. "Борьба алжирского народа против европейской колонизации (1830-1918)", стр. 64.

Ֆիլիպ Օռլեանցին որոշեց շարունակել ալժիրյան պատերազմը. 1834 թ. «Աֆրիկյան հանձնաժողովի» առաջարկությունների հիման վրա նա հայտարարեց Ալժիրի՝ Ֆրանսիայի հետ միավորման մասին և կազմակերպեց «Հյուսիսային Աֆրիկայի ֆրանսիական տարածքների» քաղաքացիական վարչակազմ՝ գեներալ-նահանգապետի գլխավորությամբ[16]:

Դեյ Հուսեյնի հեռանալուց անմիջապես հետո երկրի թե՛ կենտրոնական և թե՛ հեռավոր շրջանների արաբական ցեղերը, պահը հարմար համարելով, ապստամբեցին ոչ միայն տեղի դեռևս իրենց դիրքերը պահպանող թուրք կառավարիչների, այլ նաև ֆրանսիացի նվաճողների դեմ: Զինված դիմադրության օջախներ ձևավորվեցին Կոնստանտինայում՝ բեյ Ահմեդի, Թիթերիում՝ Բու Մեզրագի գլխավորությամբ: Օրանի շրջանում հակաֆրանսիական շարժումը գլխավորեց մարաբուտ[17] Մախի ալ-Դինը, որին հաջողվել էր իր շուրջը համախմբել տեղի մի շարք ցեղերի:

Որոշ խոշոր ավատատերեր, զգալով իրենց դիրքերի թուլությունը և ցանկանալով ամեն գնով պահել իրենց իշխանությունը, դիմեցին ֆրանսիացիների օգնությանը՝ խնդրելով զսպել ժողովրդական հուզումները: Նման համաձայնության էր եկել Թիթերիի բեյը, սակայն տեղի ապստամբ ուժերը պարտադրեցին վերջինիս հրաժարվել ֆրանսիացիների հետ համագործակցությունից[18]: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ, համաձայն այլ տեղեկությունների, ֆրանսիացիների հետ պայմանավորվածությունն ընդամենը խորամանկ քայլ էր, ինչի շնորհիվ Թիթերիի բեյ Բու Մեզրագին հաջողվեց գեներալ Քլոզելի ջոկատներին Բլիդա քաղաքի մոտ գցել ծուղակը և պարտության մատնել[19]: Դա առաջին, թեկուզ և փոքր հաղթանակն էր ֆրանսիական զորքերի նկատմամբ, ինչը ցուցադրեց նվաճողներին հաջողությամբ դիմադրելու հնարավորությունը:

---

[16] Charles-Robert Ageron, Modern Aljeria, A History from 1830 to the Present, London, 1990, p. 9.

[17] Հյուսիսային Աֆրիկայում այդպես էին անվանում ճգնավորներին, կրոնական միաբանությունների անդամներին:

[18] Хмелева Н., նշվ. աշխ., էջ 26:

[19] Куропаткин А.Н., նշվ. աշխ., էջ 19:

Ֆրանսիացիների նահանջից հետո Բլիդա քաղաքի բնակիչների մի մասը, որոնք մինչ այդ անցել էին ֆրանսիացիների կողմը, գլխովին կոտորվեցին կաբիլների և արաբների կողմից:

Գեներալ Բերտեզենը պատժիչ ջոկատներ ուղարկեց ապստամբների դեմ: Ֆրանսիացիները մեծ զոհերի գնով վերադարձրին Բլիդա քաղաքը և, շարունակելով առաջխաղացումը, ծանր մարտերից հետո գրավեցին Թիթերիի բեյի տիրույթների կենտրոնը՝ Մեդեա քաղաքը[20]: Քաղաքի գրավմամբ ֆրանսիացիները հույս ունեին վերջ դնելու բեյի ապստամբությանը, բայց, ինչպես և կարելի էր սպասել, ալժիրցիները, հանձնելով Բլիդան և Մեդեան, ֆրանսիական գլխավոր ուժերի հեռանալուց հետո անմիջապես շրջափակման մեջ գցեցին այստեղ թողնված կայազորը: Ի վերջո ֆրանսիացիները ստիպված եղան օգնական ուժեր ուղարկել՝ իրենց հայրենակիցներին շրջափակումից դուրս բերելու համար: Սակայն այս արշավանքի ընթացքում ֆրանսիացիները մեծ կորուստներ ունեցան՝ ենթարկվելով անդադար հարձակումների տեղի արաբական ցեղերի կողմից[21]:

Ֆրանսիական այս արշավանքի անհաջողությունը ոգևորեց ալժիրցիներին. վերջիններս սկսեցին գործել ավելի համարձակ և արդյունավետ: Բռնկվեցին մի շարք ապստամբություններ նաև Ալժիրի հյուսիսային շրջաններում:

Ինչ վերաբերում է Կոնստանտինայի հեղինակավոր բեյ Ահմեդին, որը նույնիսկ հավակնում էր տապալված դեյի իշխանության ժառանգությանը, ապա նրան հաջողվեց ոչ միայն պահպանել իր իշխանությունը, այլև նա սկսեց ամրապնդել իր բանակը, որն այս անգամ կազմված էր ոչ թե ենիչերիներից, այլ արաբաբերբերական աշխարհազորից[22]: Սակայն բեյ Ահմեդի իշխանությունը չէր ընդունվում նրա բեյլիքության սահմաններից դուրս:

Ֆրանսիական ներխուժման երկու տարիների ընթացքում օտարերկրյա զավթիչների դեմ արդյունավետ զինված պայքար էին սկսել առանձին ցեղեր և մարաբուտների կրոնական միաբանություններ

---

[20] Куропаткин А. Н., նշվ. աշխ., էջ 19:

[21] Նույն տեղում:

[22] Аникин В., Вайлов М., նշվ. աշխ., էջ 59:

(եղբայրություններ), մասնավորապես Դերկավիյան, Թաջինիյան և, իհարկե, Կադիրիյան: Վերջիններս ունեին երկարամյա հակաթուրքական պայքարի փորձ, որը և նրանք այս անգամ օգտագործեցին ֆրանսիացիների դեմ: Այսպես, օրինակ, Դերկավիյա միաբանության գլխավորած մահզեն ցեղերի, 1810-1813 թթ. ապստամբության արդյունքում թեկուզ և ժամանակավորապես դեյը կորցրել էր վերահսկողությունը մի շարք շրջանների վրա[23]: 1810-1815 թթ. Դերկավիյա և Թաջինիյա միաբանությունների մարաբուտները Մարոկկոյի սուլթանի աջակցությամբ գլխավորեցին Ջուրջուրի և Բաբորիի կաբիլների ապստամբությունը[24]:

Այսպիսով, ակնհայտ է, որ կրոնական միաբանությունները դարձել էին ոչ միայն հոգևոր, այլ նաև հասարակական, տնտեսական և նույնիսկ ռազմական կենտրոններ: Միաբանությունների հեղինակությունն այնքան մեծ էր, որ վերջիններս կարողացել էին իրենց ազդեցությունը տարածել ցեղային ազնվականության վրա:

Ալժիրցիները, որոնք բավական երկար ժամանակ պայքարել էին թուրքական գերակայության դեմ, ողջունեցին դեյի պարտությունը, սակայն երբ ֆրանսիացիների վարած քաղաքականությունը սպառնալիք դարձավ Ալժիրի անկախության համար, և, երբ ֆրանսիական զորքերը սկսեցին խորանալ դեպի երկրի ներքին շրջանները, արաբական ցեղերն ընդվզեցին: Սկզբնական շրջանում այդ շարժումները չունեին ընդհանուր ղեկավարություն. առավել հեղինակավոր շեյխերի միջև առկա տարաձայնությունները թույլ չէին տալիս վերջիններին գլխավորել բռնկված հակաֆրանսիական ապստամբությունը:

Իրավիճակը փորձեց շտկել Օրանի շրջանի մարաբուտ Կադիրիյա միաբանության ղեկավար Մահի ալ-Դինը[25]: Հույս չդնելով արաբական ցեղերի մոտալուտ միավորման վրա՝ նա որոշեց օգնության խնդրանքով դիմել Մարոկկոյի սուլթանին, ում միացան նաև մի քանի հեղինակավոր շեյխեր: Մարոկկոյի սուլթանը, չհամարձակվելով իր աջակցությունը բացահայտ ցուցադրել, այսուհանդերձ իր եղբորորդի

---

[23] Ланда Г., նշվ. աշխ., էջ 56:

[24] Андре-Жюльен Ш. "История Северной Африки, Тунис, Алжир, Марокко, от арабского завоевания до 1830", Москва, 1961, стр. 353.

[25] Хмелева Н., նշվ. աշխ., էջ 28:

Մուլայ Ալիի գլխավորությամբ մի ջոկատ ուղարկեց Օրան, որը պետք է ղեկավարեր Օրանի շրջանը՝ որպես սուլթանի ներկայացուցիչ: Օրանի ցեղերի մեծ մասը հավատարմության երդում տվեց Մուլայ Ալիին: Ի պատասխան ֆրանսիական իշխանությունները վերջնագիր ներկայացրին Մարոկկոյի սուլթանին՝ պահանջելով հետ կանչել իր ներկայացուցչին: 1832 թ. Մուլայ Ալին վերադարձավ Մարոկկո՝ իր փոխարեն թողնելով Մահի ալ-Դինին[26]:

Անհրաժեշտ է նշել, որ այս ժամանակահատվածում Ֆրանսիայի անմիջական հսկողության տակ էին գտնվում միայն ծովափնյա շրջանները՝ Ալժիր, Բոն, Օրան և Բոժ քաղաքները[27]: Ալժիրի մյուս տարածքները չէին ենթարկվում ֆրանսիական իշխանություններին:

Այսպիսով, Ֆրանսիայի ներխուժման առաջին տարիների ընթացքում երկրի որոշ շրջաններում բռնկվեցին հակաֆրանսիական ապստամբություններ և ընդվզումներ, որոնք, սակայն, չէին կարող էականորեն ազդել և վերջ դնել ֆրանսիական աճող ներկայությանը Ալժիրում, քանի որ այս շարժումները կրում էին տարերային բնույթ և, ինչն առավել կարևոր էր, չունեին մեկ միասնական ղեկավարություն:

Ընդհանուր առմամբ ֆրանսիացիների կողմից ծովափնյա Ալժիրի համեմատաբար հեշտ և արագ նվաճումը պայմանավորված էր երկրի բնակչության էթնիկ բազմազանությամբ և տարբեր բեյերի միջև իշխանության համար անդադար ու անզիջում պայքարով:

Նման պայմաններում Ալժիրի ամբողջական գրավումը կարող էր շատ արագ ավարտվել, եթե ասպարեզում չհայտնվեր տաղանդավոր պետական գործիչ, հմուտ զորավար և ազգային հերոս Աբդ ալ-Կադիրը: Նա Կադիրիյա միաբանության ղեկավար Մահի ալ-Դինի որդին էր և նրանից հետո գլխավորեց միաբանությունը: Աբդ ալ-Կադիրին հաջողվեց վերջ դնել ցեղային հակասություններին և միավորել արաբներին մեկ ընդհանուր նպատակի շուրջ՝ պայքար օտար նվաճողների դեմ:

1830 թ. ֆրանսիացիների ներխուժումը Ալժիր և նրա հետագա գաղութացումը անմիջապես փոխեցին երկրի պատմական ողջ ըն-

---

[26] Նույն տեղում:

[27] Charles-Robert Ageron, նշվ. աշխ., էջ 9:

թացքը՝ սկիզբ դնելով անկախության համար ալժիրցիների երկարատև և անզիջում պայքարին:

GASPARYAN ARAM

THE FRENCH INVASION OF ALGERIA IN 1830: THE RESULTS AND THE EFFECTS

At the beginning of the 19th century Algeria was a weak and divided country, so it became the first target of the French colonial acquisition in North Africa. On June 4, 1830. The French army under general de Bourmont conquested Algeria. The ruler of the Ottoman Regency of Algiers Hüseyin Dey left for Naples while most of his troops, the janissaries, moved to Turkey and Syria. The French managed to take control of the coastal communities in a short period but the other regions of Algeria were not submitted to the French authorities.

The Arab tribes, considering the moment suitable, rebelled not only against the Turkish rulers who were still holding their positions, but also against the French conquerors. The armed resistance hubs were formed in Constantina, Titteri and Oran.

The initial successes of France were largely due to the ethnic diversity of the country's population as well as by the uncompromising struggle for power between the different bays. In this situation, the full occupation of Algeria could have been completed very quickly if an Algerian "Sharif" religious and military leader, known as the Emir Abd al-Qadir, didn't appear in the arena.